[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
13	Մարտ	2019 թ.		Բ	7750430131
[4] Մատուցման ամսաթիվը					
12	Մարտ	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Փորձագիտական եզրակացություն N 03531801

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	6	8	1	8	7	7
[9] Անվանումը	«ԷՔՍՊԵՐՏ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[10] Բանկային տվյալները	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ ՇԵՆԳԱՎԻԹ Մ/Ճ	N 220098531571000						
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ 16/35							
[12] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[14] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[15] Բանկային տվյալները	ՖՆ աշխատակազմի Գործառնական Վարչություն	N 900011000834						
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[17] Լրացուցիչ տվյալներ								
[18] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծավալանակաբաժանը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն		1	100000	100000
Ընդամենը					100000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ MINASYAN RUZANNA 6308760374

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

13/03/2019 12:28:19

ՈՐՈՇՈՒՄ
Դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

07.12.2018թ. ք.Էջմիածին

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Ն.Չիչակյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 57111918 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

10.08.2018թ-ին Արմավիրի մարզի դատախազությունից ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին է ստացվել Արմավիրի մարզի Արևաշատ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված իրավախախտումների վերաբերյալ նյութերը, որի արդյունքում արձանագրվել են ,,Գնումների մասին,, ՀՀ օրենսդրության, ինչպես նաև ,,Տեղական ինքնակառավարման մարմինների մասին,, ՀՀ օրենքի պահանջների խախտումներ: Մասնավորապես՝ 2017թ-ի Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգման համար հայտարարված համար ԱՄ ԱՀ ԳՀԱՁԲ 02 ծածկագրով մրցույթին հաղթող ճանաչված ,,Վանդաժի,, ՍՊԸ-ն կապալային աշխատանքները շահել է 2466000 ՀՀ դրամ արժեքային ծավալաթերթով ներկայացված նախահաշվով, սակայն աշխատանքները չավարտված, առանց նախագծահաշվարկային փաստաթղթերի կնքվել է 906800 ՀՀ դրամ արժեքով աշխատանքների ավելացման համաձայնագիր՝ փոփոխելով պայմանագրում առկա գումարը՝ 2466000 ՀՀ դրամը, 3372868 ՀՀ դրամով՝ էական վնաս պատճառելով պետության օրինական շահերին:

Դեպքի առթիվ 2018թ. օգոստոսի 20-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 57111918 քրեական գործը:

Վկա Ս.Գևորգյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 1993թ-ից մինչ օրս հանդիսանում եմ Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ղեկավարը: Համայնքի մշակույթի տան տանիքի նախնական 2466000 ՀՀ դրամի պայմանգիրը փոփոխելու և 3372868 ՀՀ դրամի պայմանագիր կնքելու մասին հայտնել է, որ սկզբնական հաշվարկներով աշխատանքների ծավալը ոչ ճիշտ հաշվարկելու արդյունքում աշխատանքի գումարը կազմել է 2466000 ՀՀ դրամ, սակայն աշխատանքներ կատարելու ժամանակ պարզվել է, որ ծավալը չի համապատասխանում, այսինք այն սխալ է չափվել, որից հետո կնքվել է արդեն 3372868 ՀՀ դրամի պայմանագիր: Սկզբնական ծավալի հաշվարկ կատարել է ,,Երշին տրեստ,, ընկերությունը, սակայն թե ինչու է այն սխալ կատարվել չգիտի, իր կարծիքով թյուրիմացություն է եղել: Դա է եղել այդ գումարային տարբերության պատճառը:

Վկա Ա.Մելքոնյանը ցուցմունք է տվել այն մասին, որ աշխատել է ,,Երշին նախագիծ,, ՍՊԸ-ում, որտեղ 2017թ. դիմել է Արևաշատ համայնքի ղեկավարը մշակույթի տան կառուցման նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար, կազմվել պայմանագիր և կատարվել աշխատանքներ: Մշակույթի տան տանիքի կառուցվածքային առանձնահատկություններից ելնելով նախահաշվարկային փաստաթղթերի կազման ժամանակ

իր կողմից ոչ միտումնավոր տեղի է ունեցել չափերի սխալմունք, որը լրացուցիչ նախահաշվային փաստաթուղթ ներկայացնելով վերացվել է և շինարարական աշխատանքներն իրականացվել են լիարժեք:

Նկատի ունենալով, որ մի շարք հարցերի պարզաբանման համար պահանջվում են դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքների իմացության անհրաժեշտություն, ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր 243-244 հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Թիվ 57111918 քրեական գործով նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ <<էքսպերտ փորձագիտական կենտրոն>> ՍՊԸ-ի փորձագետներին:

2.Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու և առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քր. օր 338-339 և 342 հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Փորձագետներին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրանց տրամադրված նմուշների և իրերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրա կորստի, ոչնչացման կամ հափշտակելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին և նրանց պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝

1) Շինարարական աշխատանքները համապատասխանում են կառուցապատման նախագծին և այլ շինարարատեխնիկական /տեխնիկա-նորմատիվային/ փաստաթղթերին, թե՝ ոչ, եթե չեն համապատասխանում, ապա ինչում են արտահայտվում խախտումները:

2) նախագիծը, շինարարական լուծումների հիմնավորվածությունը համապատասխանում են գործող շինարարական նորմերին և կանոններին, թե՝ ոչ, եթե չեն համապատասխանում, ապա ինչում են արտահայտվում խախտումները:

3) որքան է կազմում շինարարական աշխատանքների կատարման համար օգտագործված ապրանքների շուկայական աժեքը, համապատասխանում են արդյոք դրանք նախագծում նշված արժեքին, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչով է արտահայտվում անհամապատասխանությունը:

4) կատված աշխատանքները համապատասխանում են արդյոք կառուցապատման նախագծին, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչով է արտահայտվում անհամապատասխանությունը:

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մե չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն ձեռագրաբան-փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Քննիչ՝ Ն.Չիչակյան